Գժտությունից դեպի հաշտություն

(ՀԱՏՎԱԾ)

ՄԱԿ-ի իրավարարահսկիչային գործառնությունները ազգամիջյան բախումների կարգավորման գործում այսօր կենսակաևորեն անհրաժեշտ են ոչ միայն Խորհրդային Միությանը, այլև (խաղաղ զարգացման հեռանկարների լույսի տակ) հենց միացյալ ազգերին: Ապագայում աշխարհում ոչ քիչ բախումներ են լինելու ռասայական, ազգային, ազգագրական, կրոնական հիմքի վրա, և ՄԱԿ-ը չի կարող մի կողմ կանգնել: Նրա վերպետական դերը աճելու է: Մենք պետք է նպաստենք նրա հեղինակության բարձրացմանը, սկզբունքների ու դրանց կարգավորման մեխանիզմների մշակմանը՝ նրա հետ մեր համագործակցության ճանապարհով:

Այդ կապակցությամբ առանձնապես պետք է խոսել կարգավիճակի մասին Լեռնային Ղարաբաղի, որը Հայաստանի ու Ադրբեջանի միջև դարձել է կովախնձոր: Կոսմետիկական լուծումների փորձերն այստեղ ակնհայտորեն ձախողվել են: Մեր կարծիքով, այդ հիմնահարցի արդյունավետ կարգավորման միակ ուղին մոտեցումն է հարցին ոչ թե որպես ներքին, այլ որպես սուր միջազգային բախման:

Այդ ինքնավար կազմավորման հատուկ կարգավիճակը, որի դեպքում այն գտնվում է միութենական ենթակայության ներքո, պետք է որոշվի ԽՍՀՄ-ի, Հայաստանի ու Ադրբեջանի եռակողմ համաձայնագրով: Այդ հարցը պետք է վճռվի միութենական հանրապետությունների միջև ու միութենական կառավարության հետ համատեղ հարաբերությունների ամբողջության մեջ:

Այդ բանակցություններում վճռական դերը պետք է խաղա ՄԱԿ-ը: Հենց այդ հեղինակավոր կազմակերպությունը կարող է ներշնչել Հայաստանի ու Ադրբեջանի կառավարություններին, որ նրանց նոր միջազգային կարգավիճակը (մուտքը ՄԱԿ և այլն) նույնպես, ինչպես և հարաբերությունները ուրիշ երկրների հետ ուղղակի կախման մեջ են գտնվելու փոխզիջողությունների դիմելու պատրաստակամությունից: Անհրաժեշտ է նաև այդ քաղաքականությունն ամրապնդել Արևմուտքի առաջադեմ տերությունների համաձայնեցված դիրքորոշման հետ: Նրանք օժտված են ներգործության լայն տարապատկերով՝ ինչպես անմիջականորեն, այնպես էլ երրորդ երկրների միջոցով, որոնք ազգագրականորեն առնչված են հանրապետությունների հետ, ինչպես նաև իրենց մոտ գտնվող ազգային սփյուռքի միջոցով: Պետք է բացառվի ի շահ առանձին ազգերի և ի վնաս մյուսների՝ արտասահմանյան պետությունների ամեն մի միջամտություն:

Համաձայնությունների կատարմանը հսկելու համար Լեռնային Ղարաբաղում նպատակահարմար է բացել ՄԱԿ-ի ներկայացուցչություն: Հնարավոր է նաև մարզ մտցնել խաղաղության պահպանությանն միջազգային ուժեր: Երկու հանրապետությունների միջև անհրաժեշտ է անցկացնել ապառազմականացված գոտի, որը նաև պետք է հսկվի ՄԱԿ-ի զորքերի կողմից: Անհրաժեշտ է մարդու իրավունքների պահպանության վերահսկման համար ներկայացուցչություններ բացել նաև Երևանում ու Բաքվում: Ամբողջ աշխարհի առջև վերցված պարտականությունների ամեն մի խախտում պետք է ինքնաբերաբար բխեցնի շոշափելի պատժամիջոցների կիրառում:

Մեզ թվում է, որ նման մոտեցումը հիմնահարցին ունի այն գլխավոր առավելությունը, որ, վերացնելով ազգայնականության օբյեկտիվ պատճառները, այն, համաժամանակ, գործողության մեջ է դնում ծայրահեղականությունը զսպող ամենազորեղ գործոններ:

Ս. ԶԱՐԱՍՈՎ

ԽՍՀՄ ԳԱ քաղաքատնտեսության ամբիոնի վարիչ

(«Պրովիտելստվենն վեստնիկ», հոկտեմբեր 1990 թ.)